ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն N 29Ա

22 մայիսի 2019թ.
ք. Իջևան

ԻՐԻՆԱ ԱՇՈՏԻ ՆԱԶԱՐՅԱՆԻՆ ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆՈՒՄ ՓՈՐՁԱԳԵՏ ՆԵՐԳՐԱՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի օգոստոսի 2-ի՝ <<Առանձին խնդիրների իրականացման համար պետական մարմինների կողմից փորձագետի ներգրավման կարգը և դեպքերը սահմանելու մասին>> թիվ 878-Ն որոշումը՝

հրամայում եմ.

1. 2019 թվականի մայիսի 22-ից Իրինա Աշոտի Նազարյանին ՀՀ Տավուշի մարզպետարանի զարգացման ծրագրերի,զբոսաշրջության և վերլուծության բաժնում փորձագետ ներգրավել երկու ամիս ժամկետով:

2. <<Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներին համապատասխան սահմանել դրույքաչափ՝ գլխավոր պաշտոնների 2-րդ ենթախմբի սանդղակի և աշխատավարձի 1-ին մակարդակի գործակցի /3.88/ կիրառմամբ՝ 256623/ երկու հարյուր հիսունվեց հազար վեց հարյուր քսաներեք/ դրամ:

Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Недействительная подпись

X

ԱՐՄԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N6

ք.Իջևան «22» մայիսի 2019 թ.

ՀՀ Տավուշի մարզպետարանը՝ (այսուհետ՝ Մարզպետարան) ի դեմս ՀՀ Տավուշի մարզպետարանի գլխավոր քարտուղար Արման Գևորգյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա մի կողմից, և Իրինա Նազարյան գրանցված, գ.Կիրանց անձնագիր AM 0901987, 038 կողմից տրված 15.10.2012թ. (այսուհետ՝ փորձագետ) մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին՝

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Մարզպետարանը փորձագետին հանձնարարում է իրականացնել որոշակի աշխատանքներ, որոնց նկարագրությունը նշված է սույն պայմանագրի 1.3-րդ կետում և պարտավորվում է վճարել նրա կատարած աշխատանքի համար, իսկ փորձագետը պարտավորվում է կատարել հանձնարարված աշխատանքները սույն պայմանագրով սահմանված պայմաններով:

1.2. Փորձագետն անմիջականորեն ենթարկվում է բաժնի վարիչին:

Աշխատանքների կատարման վայրն է՝ ՀՀ Տավուշի մարզպետարան:

1.3. Սույն պայմանագրով փորձագետին առաջադրվող աշխատանքը ներառում է՝

Կազմակերպում և ղեկավարում է մարզային նշանակության նպատակային ծրագրեր իրականացնող միջազգային և այլ դոնոր կազմակերպությունների ու ծրագրերի հետ համագործակցության աշխատանքները.

Կազմակերպում է մարզի, մարզի համայնքների և այլ երկրների համապատասխան տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցության աշխատանքները.

Կազմակերպում է մասնավոր հատվածի, փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացմանն ուղղված համագործակցության աշխատանքները.

Կազմակերպում և ղեկավարում է զարգացման ծրագրի մոնիտորինգի և գնահատման աշխատանքները.

Ապահովում է մարքեթինգային միջոցառումների մշակումն ու իրականացումը մարզում.

Ապահովում է մարզային զարգացման ծրագրերի հրապարակայնությունը, գերակայությունների սահմանման թափանցիկությունը և դրանց մշակման աշխատանքներին մասնակցությունը.

Կազմակերպում է ծրագրային քաղաքականության վերլուծության, ցուցանիշների և թիրախների վերհանման և ազդեցությունների գնահատման գործառույթները.

Կազմակերպում է ոլորտին վերաբերող տեղեկատվական հոսքերի կառավարումը՝ համայնքներից, հասարակական և մասնագիտական կառույցներից ստանում է անհրաժեշտ տեղեկատվություն նրանց կողմից

իրականացվող ծրագրերի մասին՝ մարզային զարգացման տեղեկատվական բազան համալրված վարելու, ինչպես նաև մարզպետի զարգացման ծրագրի իրականացման մասին տարեկան հաշվետվությունը նախապատրաստելու և ներկայացնելու համար.

1.4. Փորձագետի համար սույն պայմանագրով նախատեսված աշխատանքը համարվում է հիմնական :

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Փորձագետը պարտավորվում է՝

2.1.2. Բարեխղճորեն կատարել սույն պայմանագրով ստանձնած աշխատանքները:

2.1.3. Պահպանել համապատասխան մարմնում սահմանված ներքին կարգապահական կանոնները, աշխատանքային կարգապահությունը:

2.1.4. Պահպանել աշխատանքի պաշտպանության և անվտանգության ապահովման միջոցները:

2.1.5. Իրականացնել աշխատանքային օրենսդրությամբ, «Հանրային ծառայության մասին» օրենքով և սույն պայմանագրով իրեն վերապահված այլ պարտականությունները:

2.2. Փորձագետն իրավունք ունի՝

2.2.1. Սույն պայմանագրի 4-րդ կետի համաձայն ստանալու վարձատրություն:

2.2.2. Պահանջելու մարզպետարանից ապահովել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված իր հանգստի իրավունքը:

2.2.3. Իրականացնելու Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն պայմանագրով իրեն վերապահված այլ իրավունքներ:

2.3. Մարզպետարանը պարտավորվում է՝

2.3.1. Սույն պայմանագրի 4-րդ կետի համաձայն վճարել փորձագետի աշխատավարձը:

2.3.2. Սահմանված կարգով փորձագետին տրամադրել ամենամյա և նպատակային արձակուրդ:

2.3.3. Ապահովել անվտանգ և առողջության համար անվնաս աշխատանքային պայմաններ:

2.3.4. Փորձագետին ծանոթացնել կազմակերպությունում գործող ներքին կարգապահական կանոններին, աշխատանքի պաշտպանության և հակահրդեհային անվտանգության ապահովման պահանջներին:

2.3.5. Ժամանակին ապահովել փորձագետին անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներով:

2.3.6. Փորձագետի անձնական տվյալները մշակելիս պահպանել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված պահանջները:

2.3.7. Իրականացնել աշխատանքային օրենսդրությամբ և սույն պայմանագրով իրեն վերապահված այլ պարտականություններ:

2.4. Մարզպետարանը իրավունք ունի՝

2.4.1. Ցանկացած պահին ստուգելու փորձագետին հանձնարարված աշխատանքների կատարման ընթացքը:

2.4.2. Փորձագետին ներգրավելու արտաժամյա աշխատանքների, որի տևողությունն իրար հաջորդող երկու օրերի ընթացքում չի կարող անցնել 4 ժամը:

2.4.3. Իրականացնելու աշխատանքային օրենսդրությամբ և սույն պայմանագրով իրեն վերապահված այլ իրավունքներ:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՌԵԺԻՄԸ ԵՎ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ, ԱՐՁԱԿՈՒՐԴԸ

3.1. Փորձագետի համար սահմանվում է աշխատաժամանակի նորմալ տևողություն: Աշխատանքային օրվա սկիզբը սահմանվում է ժամը 09.00, ավարտը՝ ժամը18.00:

3.2. Փորձագետին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տրամադրվում է ամենամյա նվազագույն արձակուրդ՝ 20 աշխատանքային օր տևողությամբ:

4. ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

4.1. Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների իրականացման համար մարզպետարանը փորձագետին յուրաքանչյուր ամիս վճարում է հիմնական աշխատավարձ 256623 դրամ:

4.2. Փորձագետի համար հավելավճարներ, պարգևատրումներ, լրավճարներ չեն սահմանվում:

4.3. Փորձագետին արտաժամյա աշխատանքի յուրաքանչյուր ժամի համար վճարվում է հավելում՝ ժամային դրույքաչափի 50 տոկոսի չափով:

5. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՓՈՓՈԽՈՒՄԸ, ԼՈՒԾՈՒՄԸ ԵՎ ԴԱԴԱՐՈՒՄԸ

5.1. Սույն պայմանագիրը կարող է փոփոխվել և լրացվել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ աշխատանքային օրենսգրքով նախատեսված դեպքերի: Սույն պայմանագրի փոփոխությունները և լրացումները կատարվում են լրացուցիչ համաձայնագրերով, որոնք կհանդիսանան սույն պայմանագրի անբաժան մասը:

5.2. Սույն պայմանագիրը լուծվում է աշխատանքային օրենսդրությամբ նախատեսված կարգով և դեպքերում, ինչպես նաև առանձին խնդիրների իրականացման համար պետական մարմինների կողմից փորձագետի ներգրավման կարգի խախտմամբ կնքված լինելու դեպքերում:

6. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև 22.07.2019թ.:

7. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7.1. Սույն պայմանագրով չկարգավորված բոլոր հարցերը ենթակա են կարգավորման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.2. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունների չկատարման, կամ ոչ պատշաճ կատարման համար պատասխանատվության են ենթարկվում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.3. Սույն պայմանագիրը կազմված է երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

Գլխավոր քարտուղար Ա.Գևորգյան (ստորագրությունը)	Փորձագետ Ի.Նազարյան (ստորագրությունը)

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ Հ. ՉՈԲԱՆՅԱՆ

ԶԱՐԳԱՑՄԱ ԾՐԱԳՐԵՐԻ, ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՓՈՐՁԱԳԵՏԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

Հիմք ընդունելով 2018 թվականի օգոստոսի 2-ի՝ <<Առանձին խնդիրների իրականացման համար պետական մարմինների կողմից փորձագետի ներգրավման կարգը և դեպքերը սահմանելու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության թիվ 878-Ն որոշումը՝ ՀՀ Տավուշի մարզպետարանի զարգացմա ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնում ներգրավել փորձագետ:

Փորձագետ ներգրավելու հիմնավորում

- Առանձին խնդիրների, զարգացման ծրագրերի և վերլուծությունների ոլորտի ծավալուն և կոնկրետ գործառույթներ իրականացնելու նպատակով պրակտիկայի ընթհանրացման, մարքետինգի,ներդրումների,բիզնես ծրագրերի կատարելագործման վերաբերյալ առաջարկությունների ներկայացման առանձին ծրագրային վերլուծությունների ուսումնասիրման, ինչպես նաև բաժնի կանոնադրության խնդիրներից բխող զարգազման ոլորտին վերաբերող գործառույթների իրականացման ծավալների կտրուկ ավելացման նպատակով անհրաժեշտություն է առաջացել ՀՀ Տավուշի մարզպետարանի զարգացման ծրագրերի,զբոսաշրջության և վերլուծության բաժնում ներգրավել փորձագետ:
- **Փորձագետից ակնկալվող արդյունքներ**
- Առավել արդյունավետ դարձնել բաժնի առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող մարքետինգային միջոցառումների մշակման, ներդրումային ծրագրերի իրականացման,նախագծերի,առաջարկությունների,եզրակացությունների,այլ փաստաթղթերի նախապատրաստման, ինչպես նաև դրանց վերաբերյալ մեթոդական պարզաբանումների մշակման աշխատանքները:
- Փորձագետի աջակցության շնորհիվ կբարելավի զարգացման, ներդրումային, բիզնես ծրագրերի մեթոդական և գործնական օգնությունը:
- Մարքետինգային,ներդրումային,բիզնեսծրագրայինաշխատանքների ծավալների մեծացումը:

- Փորձագետի աշխատանքային պարտականություններն են

- Ապահովում է Հայաստանի Հանրապետության օրենքների, Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերի, կարգադրությունների, Հայաստանի Հանրապետության կառավարության և վարչապետի որոշումների, ինչպես նաև այլ

նորմատիվ իրավական ակտերի կատարումը, մարզպետարանի ենթակայության կազմակերպությունների և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մեջ:

- Մասնակցում է օրենսդրության կիրառման պրակտիկայի ընդհանրացմանը, օրենսդրության կատարելագործման վերաբերյալ առաջարկություններ է ներկայացնում բաժնի վարիչին:
- Միջոցներ է ձեռնարկում քաղաքացիների իրավունքները և ազատություններն ապահովելու ուղղությամբ:
- Մասնակցում է մարզային ենթակայության կազմակերպությունների ղեկավարների կողմից ընդունված իրավական ակտերի ուսումնասիրության աշխատանքներին, օրենսդրությանը հակասող իրավական ակտերի առկայության դեպքում հաղորդումներ է ներկայացնում բաժնի վարիչին՝ դրանք օրենսդրությամբ սահմանված կարգով վերացնելու կամ կասեցնելու համար: Սահմանված կարգով տեղեկություններ է նախապատրաստում տվյալ բնագավառում կառավարության տարածքային քաղաքականության իրականացման վերաբերյալ:

- **Փորձագետին ներկայացվող պահանջներն են**
  ՀՀ քաղաքացիություն
  Բարձրագույն կրթություն
  Ծրագրերի համակարգման ոլորտում աշխատանքային փորձ
  Թիմում աշխատելու և թիմ ղեկավարելու փորձ
  Ծրագրերի համակարգման ժամանակակից տեղական և համաշխարհային միտումների իմացություն
  Օտար լեզուների իմացությունը կդիտվի որպես առավելություն

- **Փորձագետ ներգրավելու ժամկետն է 2/երկու/ ամիս:**
- **Փորձագետի վարձատրությունը՝**
- <<Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներին համապատասխան սահմանել դրույքաչափ՝ գլխավոր պաշտոնների 2-րդ ենթախմբի սանդղակի և աշխատավարձի 1-ին մակարդակի գործակցի /3.88/ կիրառմամբ՝ 256623/ երկու հարյուր հիսունվեց հազար վեց հարյուր քսաներեք/ դրամ:

- **Փորձագետը ամեն եռամսյակ կատարած աշխատանքների վերաբերյալ ներկայացնում է հաշվետվություն**

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա.ԳԵՎՈՐԳՅԱՆ

15 մայիսի 2019թ.

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

2019 թվականի մայիսի 16-ին ՀՀ Տավուշի մարզպետարանի պաշտոնական կայքում տրվել է հայտարարություն մարզպետարանի զարգացման ծրագրերի,զբոսաշրջության և վերլուծության բաժնում փորձագետ ներգրավելու մասին:

Սահմանված ժամկետում դիմել է մեկ հավակնորդ՝ Իրինա Նազարյանը:

Դիմորդի փաստաթղթերի ուսումնասիրության և հարցազրույցի արդյունքում Իրինա Նազարյանի հետ կնքվել է աշխատանքային պայմանագիր:

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա.ԳԵՎՈՐԳՅԱՆ

22.05.2019թ